




ԺԱՄԱՆԱԿՆ Է ԱՆՑՆԵԼ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾԵՐԻ

Սամվել ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԿԳ նախարարության
Գիտության
այետական
կոմիտեի
նախագահ

Չրուցում է
Համլետ ԲՈՉԱՐՅԱՆԸ





- Դուք բազմիցս կարծիք եք հայտնել, որ ՓՄՁ ոլորտի զարգացումն էապես պայմանավորված է գիտության զարգացմամբ: Բայց ես անմիջապես հավելել եք, որ Հայաստանում արտադրության բնագավառի ներկայացուցիչները կասկածանքով են վերաբերվում տնտեսության մեջ գիտական նորարարությունների ներդրմանը: Ինչպես եք շատերը, Դուք էլ համարում եք, որ հույժ կարելու է ակտիվացնել կապը բիզնեսի ու գիտության միջև: Ի՞նչ եք կարծում՝ վերջին մեկ-երկու տարիներին ինչ-որ բան փոխվել է այդ առումով: Ինչպիսի՞ն է վիճակը Հայաստանում, եւ գիտություն-արտադրություն կապի ի՞նչ զարգացումներ կարելի է սպասել:

- Այն, ինչ մտածում ենք իրականացնել, եւ այն, ինչ ի վիճակի ենք այսօր անել, էապես տարբերվում են: Դա այդպես էլ պետք է լինի, քանի որ միտքը միշտ իրականությունից առաջ է ընկնում: Նշեմ, որ միայն պետական բյուջեով գիտություն զարգացնելն անգամ բարեկեցիկ երկրների համար նորմալ երեւոյթ է: Եվ հուսալ, որ պետական ֆինանսավորմամբ հնարավոր է գիտության որեւէ ոլորտ զարգացնել, անհիմատ է: Գիտության նորմալ զարգացումն հնարավոր է ապահովել պետական միջոցների հետ համատեղ, նաեւ պետական այլ աղբյուրներից, ինչպես նաեւ մասնավոր հատվածի միջոցներից ներդրումներ կատարելով: Եթե դրանք լինեն, որոշակի համահունչ զարգացում կլինի: Արեւմուտքում պետական եւ ոչ պետական միջոցների ներդրման համամասնությունները տարբեր են: Որոշ երկրներում գիտության ֆինանսավորման ավելի քան կեսը պետական միջոցներով է լինում, մյուս կեսը՝ մասնավոր հատվածի, որոշ երկրներում էլ այդ համամասնությունը կարող է հասնել ընդհուպ 70/30-ի, այսինքն՝ ծախսվող գումարների զգալի մասը ներդրում է մասնավոր հատվածը: Որքան զարգացած է պետությունը, այնքան գիտությունը ֆինանսավորելու գործում մասնավոր հատվածի ներդրումը մեծ է: Բայց նման վիճակի հասնելու համար պետությունը հսկայական անելիք ունի, ու որպեսզի կարողանա ինքնակարգավորվող, այսպես կոչված՝ սիներգետիկ հստակ աշխատող համակարգի անցնել, սկզբնական փուլում պետք է լուրջ ներդրումներ եւ ուշադրություն հատկացնի ոլորտին: Այդպիսին է քաղաքակիրթ աշխարհի փորձը: Դրա տիպիկ օրինակ կարող է լինել Իսրայելը: Այս երկրի գիտության ոլորտում 1960-ականներին գրեթե նույն վիճակն էր, ինչ հիմա Հայաստանում: Բայց նրանք

այն ժամանակ հսկայական աշխատանք կատարեցին: 60-ականներին Իսրայելում հիմնվեց առաջին վեչելուրային հիմնադրամը՝ մոտ 500 մլն դոլլար կապիտալով, որն այն օրերի երիտասարդ այդ պետության համար հսկայական գումար էր: Հիմնադրամի ստեղծումից արդեն 5-6 տարի հետո երեւաց գիտական իրական արդյունքը, որն ապրանքի տեսքով սկսեց կիրառվել տնտեսության մեջ: Այնպես որ՝ միամտություն կլինի մտածել, թե նման հիմնադրամի ստեղծումից հաշված օրեր կամ ամիսներ անց դրված գումարները ետ են գալու: Գիտական արդյունքի կիրառումը եւ ներդրումը տնտեսության մեջ այնքան էլ պարզ գործընթաց չէ, իսկ հիմնարար գիտելիքի տված արդյունքը գնահատելը առավել բարդ գործ է: Այն գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ գիտելիքի ազդեցությունը այլ ոլորտների վրա (կրթություն, դպրոց, առողջապահություն եւ այլն): Ըստ Եվրամիության տվյալների՝ հիմնարար գիտության մեջ դրված յուրաքանչյուր դոլլարը տասնապատիկ կարող է վերադառնալ: Հիմնարար գիտությունը բարձր զարգացում ապահովող ոլորտ է: զարգացած հիմնարար գիտությունն ունեցող երկրները ունեն նաեւ զարգացած բուհ, լավ դպրոց: Նման երկրներում մարդկանց կրթական մակարդակը բարձր է, ինչի շնորհիվ էլ արատավոր մի շարք երեւոյթներ, այլ երկրների համեմատ, սակավ են: Յետեւաբար՝ պետությունը այդ երեւոյթների դեմ պայքարելու ուղղությամբ ավելի քիչ միջոցներ է ծախսում, եւ տասնապատիկ օգուտը հենց այդ սկզբունքով է հաշվվում: Որպես կանոն՝ զարգացած հիմնարար գիտությունն ունեցող երկրներում բարձր մակարդակի է նաեւ կիրառական գիտությունը: Հիմնարար գիտությունը կիրառականը սնող աղբյուր է, առանց որի նորարարական կամ կիրառական որեւէ խնդրի լուծում գրեթե անհնար է: Ցավոք, մեր երկրում շատերը չեն հասկանում այդ պարզ ճշմարտությունը եւ պնդում են, որ այս իրավիճակում Հայաստանին պետք չէ զարգացնել հիմնարար գիտություն: Պնդում են, թե երկիրը փող չունի վերացական գիտելիքի վրա ծախսելու: Սխալ մտածելակերպ է: Հիմնարար գիտության զարգացման ուղղությամբ թերեւս չեն աշխատում միայն աֆրիկյան թերզարգացած «բանախային» պետությունները: Եթե երկիրը հիմնարար գիտություն չունի, ուրեմն՝ քաղաքակիրթ աշխարհին ասելիք չունի:

Հարկ է արձանագրել, որ Հայաստանում գիտության նկատմամբ պետական վերաբերմունքը 2000-ից ի վեր դրական

իմաստով փոխվել է: Տնտեսության զարգացումն ու բյուջեի մեծացումը չէին կարող չանդադրադառնալ գիտության վրա: Ցանկացած պետություն տնտեսության աճի դեպքում սկսում է մտածել գիտության զարգացման մասին: Երեւի թե կյանքն էլ է պարտադրում դա անել: Որովհետեւ եթե տնտեսությունը որոշակի հաջողություններ է արձանագրել, ապա պահանջ է ստեղծվում նորարարական արդյունքներ օգտագործել, որպեսզի բիզնեսը բարելավվի, քիչ գումարներ ներդնելով՝ ավելի մեծ շահույթ ապահովվի: Իսկ դա արդեն գիտություն է: Եթե տնտեսության մեջ զարգացման որոշակի միտումներ նկատվում են, ապա անմիջապես գիտության առաջնայնությունն ակնհայտ է դառնում: Մեզանում 2000-ից սկսած՝ փոխվեց գիտության նկատմամբ վարվող քաղաքականությունը: Հասկացանք, որ թեմատիկ ծրագրերով գիտություն պահել հնարավոր չէ: 1994-ից հետո Հայաստանում գիտության ֆինանսավորումը միայն թեմատիկ ծրագրերով էր իրականացվում: Ժամանակին այդ գաղափարը ճիշտ էր եւ որոշակի արդյունք տվեց: Բայց ընթացքում պարզ դարձավ, որ առանց բազային ֆինանսավորման անհնար է ինստիտուտները պահել: Դրա համար էլ 2004թ. ներմուծվեց բազային ֆինանսավորման գաղափարը:

Մյուս կողմից՝ Գիտության պետական կոմիտեի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գիտությանը վերաբերող շատ գործառնություններ տարանջատված են տարբեր նախարարությունների միջև: Գիտական բիբլիոգրաֆիկ ծառայությունները տրվել են Մշակույթի նախարարությանը, նորարարական գործունեության եւ գիտական արդյունքների առևտրայնացումը տրված է Էկոնոմիկայի նախարարությանը: Եթե գիտական արդյունքն այլեւս ապրանք է, ապա դրա կիրառման համար Էկոնոմիկայի նախարարությունը կարող է մեծ դեր ունենալ՝ այդ ապրանքը ներկայացնելով համապատասխան հիմնարկներին, բայց մինչեւ գիտական արդյունքն ապրանք դառնալը այն անցնում է հետազոտական երկար ճանապարհ, որի համակարգող կառույցը պետք է լինի գիտական եւ գիտատեխնիկական գործունեության լիազոր մարմինը: Դա պետք է իրականացնի պրոֆեսիոնալ կառույց, ինչպիսին Գիտության պետական կոմիտեն է: Համաձայն մեր կանոնադրության՝ Գիտության պետական կոմիտեն գիտության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող եւ իրականացնող կառույց է: Գի-



տության ոլորտին վերաբերող որոշ գործառնություններ, որոնք վերապահված են տարբեր նախարարությունների, պետք է վերաբաշխվեն: Ցավոք, այդ առումով գրեթե ոչինչ չի փոխվել, բայց ես հույս ունեմ, որ դա պայմանավորված է անցումային շրջանով, որը շուտով կավարտվի:

- Երբ գիտությունը զարգանա, ես դրա անհրաժեշտությունն առաջանա, այդ վերաբաշխումը ինքնըստինքյան տեղի կունենա: Արդյո՞ք ամենալավ պահն է գիտությամբ զբաղվելու փոխարեն վերաբաշխումներ անել:

- Գիտությունը զարգացնելու համար հարկավոր են խաղի որոշակի կանոններ, ինչի համար պետք են պետական համապատասխան մարմիններ, որպեսզի այդ կանոնները ստեղծեն: Ինչպես նշեցի, նմանատիպ կառույց է, օրինակ, Գիտության պետական կոմիտեն, որի կանոնադրական որոշ լիազորություններ

դեռևս իրականացնում են պետական այլ մարմիններ, որոնք այս պահին օժտված են նմանատիպ կանոնադրական իրավունքներով: Այսինքն՝ այսօր առկա են կանոնադրական որոշ հակասություններ պետական կառավարման մի շարք մարմիններում:


- Դուք ասում եք, որ 2000-ից ոլորտի նկատմամբ վերաբերմունքը էապես փոխվել է: Բայց Ձեր իսկ ներկայացրած իրավիճակից ստացվում է, որ այն ժամանակներից առայսօր վերաբերմունքի առումով նոր դրսևորում գրեթե չի եղել: Ամեն ինչ մնացել է նույնը: Ձեր խոսքերից է դա հետևում:

- Միայն Գիտության պետական կոմիտեի ստեղծումն արդեն իսկ վերաբերմունքի փոփոխման ազդանշան է:

- Վերաբերմունքի փոփոխությունը ակնհայտ կլինի այն դեպքում, երբ Դուք ոլորտի ֆինանսավորման առումով զու-

գահեռներ տանեք, համեմատություններով ցույց տաք այդ փոփոխությունը: Օրինակ՝ ի՞նչ գումարներ էին հատկացնում Հայաստանի բնական ու կիրառական գիտությանը ԽՍՀՄ օրոք (չատ լավ հասկանում եմ, որ այն ծառայում էր ողջ Միությանը եւ ոչ Հայաստանին), որքա՞ն էր հատկացվում մինչև 2000թ., որքա՞ն՝ դրանից հետո, նաեւ այսօր: Հատկացված գումարների որ մասն էր տրվում աշխատավարձի ֆոնդին, որը՞ նյութատեխնիկական բազայի թարմացմանը, որը՞ գիտական միջոցառումների կազմակերպմանը, եւ այդպես շարունակ: Ու, ի վերջո, մենք կարող ենք լուրջ գիտությունից խոսել միայն այն դեպքում, երբ ունենք այն սնող լուրջ բազա, բարձրակարգ կրթություն:

- Իհարկե՝ ամեն ինչի հիմքը նախ ֆինանսավորումն է: Մեզ մոտ ֆինանսավորման ծավալներն ակնհայտորեն շատ



փոքր են: Գիտության մեջ կատարված ներդրումից մուլտիպլիկատիվ էֆեկտ ստանալու առումով կան միջազգային որոշակի չափանիշներ: Օրինակ՝ եվրոպական միջին չափանիշը մուլտիպլիկատիվ էֆեկտ ստանալու համար նվազագույնը ՀՆԱ-ի 0.6%-ն է: Այսինքն՝ գոնե այդքան պետք է հատկացվի գիտությանը, որպեսզի գիտությունից որոշակի արդյունքներ ստացվեն: Այսօր Եվրոպայում միջինում ՀՆԱ-ի 1.6-1.7%-ը ծախսում են գիտության վրա: Հայաստանում այդ ցուցանիշը 0.2% է: Քանի որ մեր ՀՆԱ-ն բավական փոքր է, ապա գիտությանը հատկացված գումարի բացարձակ թիվը նույնպես շատ փոքր է: Բայց դա հարցի մի կողմն է: Հաջորդ խնդիրն այն է, որ նույնիսկ ֆինանսավորման մեծ ծավալների պարագայում, մինչև նույն է, լուրջ խնդիրներ կունենանք գիտական արդյունքների կիրառման տեսանկյունից, որովհետև ԽՍՀՄ-ից ժառանգել ենք ծանր բեռ՝ ավելի քան 85 գիտական հիմնարկների տեսքով, որը Հայաստանի համար անասելի մեծ թիվ է: 70 միլիոնանոց Իտալիան ունի ընդամենը 78 համալսարան եւ դրանց կից բավական սահմանափակ թիվով հետազոտական հաստատություններ: ՀՀ-ում կան 80-ից ավելի մասնավոր ու պետական բուհեր եւ 85-ից ավելի հետազոտական ինստիտուտներ:

- Բուհերի մեծ մասն իրականում գբաղված է բիզնեսով եւ ոչ գիտությամբ:

- Նայած բուհ: Օրինակ՝ ԵՊՀ-ն, Ճարտարապետաշինարարական եւ Ճարտարագիտական համալսարանները գիտական արդյունքների ծավալներով բավական լուրջ դիրքեր են զբաղեցնում: Անշուշտ՝ մենք ունենք բարեփոխումների խնդիր: Ոլորտում այնքան շատ հարցեր են կուտակվել, որ գիտությունից որոշակի արդյունք ստանալու համար պետք է ամենից առաջ վերանայել ֆինանսավորման հարցը եւ կառուցվածքային լուրջ փոփոխություններ իրականացնել: Այդքան ինստիտուտ մեզ պետք չէ: Դրանց գոյությունը խիստ արդարացված էր ԽՍՀՄ օրոք: Մենք այն ժամանակ այդ երկրի մասն էինք եւ այդ ինստիտուտները Հայաստանում բացվել են՝ ըստ մեր հանրապետության գիտական ներուժի եւ ԽՍՀՄ առջև դրված խնդիրների: Ահավասիկ՝ Երեւանի ֆիզիկայի ինստիտուտը, մաթեմատիկական մեքենաների ինստիտուտը: Հիմա ժամանակներն ու խնդիրները փոխվել են: Մենք ունենք փոքր պետություն, սահմանափակ գիտակրթական տարածք ու մարդկային ռեսուրսներ, սակայն նույն քանակությամբ ինստիտուտներ, ինչ ԽՍՀՄ օրոք

էր: Բնական է, որ այդ ինստիտուտների թիվն ու կառուցվածքը նույնպես պետք է փոխվեն: Այդ հսկա շինությունները՝ գիտական հաստատությունները, վերջին 25-30 տարիներին գրեթե չեն վերանորոգվել, եւ շենքային պայմանները վատթար վիճակում են, սրանց գիտատեխնիկական բազան գրեթե չի թարմացվել: Նման իրավիճակում գիտության նկատմամբ բիզնեսի կողմից վստահելի վերաբերմունք լինել չի կարող: Դրա համար էլ գիտության վերականգնման հարցում սկզբնական շրջանում պետության դերակատարումը շատ մեծ պետք է լինի: Հիմա հարկավոր է լուրջ փոփոխություններ կատարել թե՛ կառուցվածքային առումով, թե՛ ընդհանրապես: Առաջնահերթ պետք է փոխել ֆինանսավորման կարգերը: Կառուցվածքային փոփոխության զուգահեռ, պետք է ձգտենք մասնավոր հատվածին ներգրավել այս ոլորտ: Իսկ այդ քայլերի հիմնական դերակատարը կարող է լինել միայն պետությունը: Առայսօր չունենք վենչուրային հիմնադրամներ, առանց որոնց երբեք հնարավոր չի լինելու մասնավոր հատվածին բերել դեպի գիտություն:

- Իսկ ի՞նչն է խանգարում վենչուրային հիմնադրամների ստեղծմանը:

- Դժվարանում են ասել: Գուցե՞ ֆինանսների սակավությունը: Բայցե ոչ միայն դա: Չնայած մեր բազմակի հայտարարություններին, որ գիտությունը մեր գերակայությունների շարքում է, այնքան էլ այդպես չէ: Մեր գիտնականները, անկեղծ ասած, գիտելիքահենք տնտեսություն ունենալուն ուղղված հոգածություն չեն զգում: Հայտարարել մի կան է, իրական, գործնական քայլեր կատարելը՝ բոլորովին այլ: Այսօր գիտնականի միջին աշխատավարձը պետք է մոտ լինի գոնե դպրոցի ուսուցչի աշխատավարձին, մինչդեռ գիտնականը ստանում է միջին հաշվով 50-55 հազար դրամ:

- Հանրապետությունում միջին աշխատավարձը 100 հազար դրամ է, իսկ նվազագույնը՝ 30: Փաստորեն՝ գիտնականները նվազագույնից քիչ բարձր աշխատավարձ են ստանում:

- Ամեն ինչ համեմատության մեջ է: Մեր հարեւանների՝ Վրաստանի կամ Ադրբեջանի դեպքում էլ բարվոք վիճակ չէ:

- Բայց Վրաստանի պետական համալսարանում լուրջ, մեր տարածաշրջանի չափանիշներով ֆանաստիկ ներդրումներ են կատարվում:

- Վերջերս եմ այնտեղ եղել: Նախ՝ իրենց գիտությանը հատկացված բյուջեն

հավասար է ՀՆԱ-ի ընդամենը 0.1%-ին: 300 աշխատակից ունեցող՝ Թբիլիսիի ֆիզիկայի ինստիտուտի բյուջեն ընդամենը 200 հազար դոլլար է: Մինչդեռ մեր ֆիզիկայի ինստիտուտը պետական բյուջեից 1.5 մլն դոլլարի չափով ֆինանսավորում է ստանում:

- Բայց մեր ֆիզիկայի ինստիտուտը ԽՍՀՄ օրոք իր հզորությամբ, իր կադրերով գրեթե չէր զիջում Դուբնայի ինստիտուտին, որն այդ պետության ֆիզիկայի կենտրոնն էր համարվում: Մեր ինստիտուտը աշխարհում ճանաչված կենտրոն էր, այնպես որ՝ այս երկուսը պարզապես անհամեմատելի են:

- Բայց Դուբ եք խոսում Վրաստանի համալսարանի լավ վիճակի մասին:

- Ես գիտեմ, որ այնտեղ լուրջ ներդրումներ են անում, աշխարհի ճանաչված մասնագետներին են հրավիրում դասախոսելու:

- Նրանք նման մտադրություններ ունեն, բայց ոչ ավելին: Ես չեմ հավատում, որ այնտեղ կարողանան նման ծրագիր իրականացնել: Այնտեղ ակադեմիական համակարգի ինստիտուտներում արգելված է ասպիրանտներ պահելը: Դա անհեթեթություն է: Ասպիրանտուրան տվել են միայն համալսարաններին, եւ միայն սրանք իրավունք ունեն ասպիրանտական տեղեր ունենալ: Ինստիտուտները «ինքնահոս» վիճակում են: Նրանցից բանավոր խնդրանք եմ ստացել, որ իրենց որոշ երիտասարդ գիտնականներ գան այստեղ՝ մեր փորձն ուսումնասիրելու եւ Վրաստանում կիրառելու նկատառումով:

- Հանրապետությունում հաշվում են 7.5 հազար գիտնական, որոնց միջին տարիքը 65-ին մոտ է, իսկ մի շարք ոլորտներում անցնում է 70-ի շեմը: Դուբ մեկ անգամ չէ, որ նշել եք, որ նրանցից 1000-1200-ը ճանաչված գիտնականներ են: Այլ կերպ ասած՝ ներուժ: Խորին հարցանք տածելով տարեցների նկատմամբ՝ պետք է ասեմ, որ նրանց զգալի մասը գիտության մեջ նոր խոսք ասել այլևս չի կարող: Ընդ որում՝ ես ընդամենը կրկնում եմ մասնագետների բազմիցս արտահայտած միտքը: Հասկանալի է, որ կա հարցի բարոյական կողմը, եւ բացի այդ՝ նրանց գիտությունից «հեռացնելը» սոցիալական լուրջ խնդիր է ծնելու: Նման իրավիճակում այսօր ունենք գիտնականների մեծաթիվ, բայց թույլ ներուժով բանակ: Կտրուկ քայլերի գնալը կարող է սոցիալական լուրջ խնդիրների տեղիք տալ, չգնալը նշանակում է գիտության ներուժի ընդհանրապես ամլացում:

- Իմ հարցազրույցներում ես ասել եմ, որ գիտության մեջ ընդգրկված գիտու-



թյան թեկնածուների միջին տարիքը 56-57 է, գիտության դոկտորներինը՝ 62-63:

Տարեցների հետ կապված հարցի առնչությամբ ստիպված եմ վերադառնալ մեր գրույցի սկզբին, հիմնարար գիտությանը: Գրագետ մարդ ունենալը պետության մեջ արդեն իսկ մեծ բան է:


- Մարդկության, գիտության փորձը ցույց է տալիս, որ գիտության մեջ ամենաակտիվը տարիքային 35-45 միջակայքն է: Հասկանալի է, որ մեծ շեղումներ էլ կարող են լինել, բայց դրանից միայն հետեւում է, որ բացառությունները հաստատում են օրինաչափությունը: Մյուս կողմից՝ Դուք էլ եք շեշտել, եւ ոչ մեկ անգամ, որ աշխարհում գիտական լուրջ գործունեություն ծավալելու տարիքը 35-45-ն է: 77 տարեկան գիտնականը (խորին հարգանք ունենալով ցանկացածի եւ՝ տարիքի, եւ՝ գիտական գործունեության նկատմամբ) ի՞նչ տոր բան է ասելու գի-

տության մեջ (օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտի գիտնականների միջին տարիքն անցնում է 73-ից):

- Այս ոլորտում շատ կորուստներ ենք ունենցել, բայց 35-45 տարիքային միջակայքում դեռեւս լավ գիտնականներ ունենք: Մենք պետք է մտածենք նաեւ հիմնականում 35-45 տարիքային միջակայքի այն մարդկանց ներուժն օգտագործելու մասին, ովքեր արտերկրում են: Իհարկե՝ Հայաստանը ինչ-որ չափով օգտագործում է նրանց ներուժն այն ամուսնով, որ տարբեր խողովակներով հանրապետություն է մտնում տարեկան շուրջ 7 մլն դոլլար՝ դրամաշնորհային ծրագրերի տեսքով: Այդ գումարների առյուծի բաժինը այդ 35-45, գուցե քիչ ավելի կամ պակաս տարիքի մեր գիտնականների շնորհիվ ենք ստանում: Դրանում նրանց ներդրումը շատ մեծ է:

- Ցավոք՝ այն, ինչ Դուք ներկայացնում եք, արտագնա աշխատանքի մեխանիզմն է: Մյուսները, այսպես ասենք՝ հասարակ մարդիկ գնում են ասֆալտ փռելու կամ շինարարություն անելու, իսկ այս գիտնականները, այստեղ դրսևորվելու հնարավորություն չունենալով, դրսում գիտությամբ են զբաղվում: Առաջինները ասֆալտից են փող ուղարկում, նրանք՝ գիտությունից, այն տարբերությամբ միայն, որ գիտնականների պարագայում հնարավորություն կա հայաստանցիներին էլ ներգրավել գիտական գործընթացների մեջ: Այնպես որ՝ այդ 7 մլն դրամաշնորհն այդ գիտնականների շնորհքն է՝ դրսից այստեղ իրենց գործընկերների համար գիտական աշխատանք, աշխատատեղեր ստեղծելուն ուղղված:

- Ստիպված եմ համաձայնել: Մարդիկ գնացել են՝ սոցիալական ծակը պայմաններից ելնելով եւ օգնում են իրենց



երկրին: Գիտության մեջ գնացող-վերադարձողների որոշակի հավասարակշռություն անպայման պետք է լինի: Եթե գնան ու չվերադառնան, խայտառակ վիճակում կհայտնվենք: Բայց գիտության մեջ միգրացիան բացասական երեւոյթ չէ: Գիտությունը բաց համակարգ է, ու եթե գիտնականը արտաքին աշխարհի հետ չի շփվում, նա որպես գիտնական շատ արագ կդադարի գոյություն ունենալ: Եթե գիտնականը գիտաժողովների չմասնակցի, ամիսներով դրսում չաշխատի, չի կարող աճել: Բայց նաեւ պետք է վերադառնա:

- Այսօր գիտնականների ո՞ր մասն է գնում, եւ գնացածների ո՞ր մասն է վերադառնում:

- Գնացածների չնչին մասն է վերադառնում: Դա շատ ծանր երեւոյթ է մեր գիտության համար: Պետությունը որոշակի քայլեր ձեռնարկել է գիտական արտագաղթը կանխելու ուղղությամբ: Այս տարի երիտասարդ՝ մինչեւ 35 տարեկան գիտնականների մրցույթ հայտարարեցինք, որը ՀՀ-ում առաջին անգամ էր: Օգտագործեցինք եւ՝ պետական միջոցներ, եւ՝ Միացյալ Նահանգների տրամադրած գումարները: Սա համատեղ ծրագիր էր: Բավական լուրջ մրցույթ ստացվեց: Մեկ ծրագրի համար մրցույթին մասնակցեց 4 ծրագիր: Ներկայացվել էր ընդհանուր առմամբ 119 ծրագիր: Սրանցից ֆինանսավորեցինք 20-ը: Ընդ որում՝ մասնակիցները բավական բարձր բալեր էին հավաքել, ինչը նշանակում է, որ բավական լավ երիտասարդ կադրեր ունենք: Այլ խնդիր է, որ հետո չենք կարողանում այդ երիտասարդներին պահել: Աշխատավարձերը շատ ցածր են, այդ մարդիկ հայտնվում են սոցիալական լուրջ խնդիրների առջեւ ու հեռանում են: Բնականաբար՝ երիտասարդ գիտնականների առումով պետական լուրջ ծրագրերի իրականացում է պետք: Մենք պատրաստվում ենք գիտության երիտասարդացմանը միտված իրավական ակտի նախագիծ ներկայացնել կառավարության: Մտածել ու մշակել ենք միջոցառումների բավական լուրջ ծրագիր: Առաջարկելու ենք երիտասարդ գիտնականներին բնակարաններով ապահովելու համար ցածր տոկոսադրույքներով հիպոթեկային վարկերի տրամադրում, որը բավական հաջողությամբ կարողացան իրականացնել Բելառուսում: Եթե վարկերը այն տոկոսադրույքներով տրամադրվեն, ինչ այսօր նախատեսված է երիտասարդ ընտանիքների համար, ապա հաջողություն չենք ունենա, որովհետեւ դրանք գիտնականներին անհասանելի

թվեր են: Մեր միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսելու ենք լավագույն 50 երիտասարդ գիտնականների համար հավելյալ աշխատավարձերի համակարգ սահմանել՝ ամսական 100 հազար դրամի չափով: Կան մի շարք չափանիշներ, որոնցով կորոշվեն լավագույնները: Այսօր պետական հոգածության կարիք կա, եւ պետությունը հնարավորության սահմաններում այդ հարցերով լուրջ զբաղվում է, որպեսզի երիտասարդ գիտնականների անվերադարձ հոսքը փոխարինի «գնալ-վերադառնալու» դինամիկ հավասարակշռությամբ: Գիտնականին չպետք է գամենք իր լաբորատորիային, դա արդյունք չի տա: Պետք է ստեղծենք պայմաններ, որ գնա, տեսի՝ դրսում այդ ոլորտում ինչ է կատարվում, շփվի, փորձի փոխանակում տեղի ունենա, եւ անպայման վերադառնա: Իսկ դրա համար որոշակի քաղաքականություն պետք է իրականացվի:

- Այդ ամենի համար ի՞նչ միջոցներ պետք է ներդրվեն: Մե՞ծ գումարների մասին է խոսքը:

- Երկու տարի առաջ նման հաշվարկ կատարել եմ (որը, բնականաբար, շատ մոտավոր է եւ չի հավակնում վերջնական ճշմարտության), թե ինչպիսի բյուջե պետք է ունենանք, որպեսզի կարողանանք գիտության մեջ եւ՝ մուլտիպլիկատիվ էֆեկտ արձանագրել, եւ՝ մասնավոր հատվածին ներգրավել՝ գիտության մեջ ներդրումներ կատարելու, եւ՝ դինամիկ հավասարակշռություն պահպանել գնացող ու վերադարձող գիտնականների առումով: Հաշվարկները չմարտասուներով՝ կշեմ, որ առաջնորդվել եմ՝ ելնելով նաեւ այն հանգամանքից, որ հանրապետությանը պետք է երկու-երեք հետազոտական համալսարան (մեկ նման համալսարանը, ամենաեթան տարբերակով, պետությանը կարժենա 160-170 մլն եվրո): Այդ ամենով հանդերձ, եթե ուզում ենք մուլտիպլիկատիվ էֆեկտ ունենալ, անհրաժեշտ է տարեկան միջին հաշվով 100-120 մլն դոլլարի չափով գիտության բյուջե: Եթե կարողանանք այդքան գումար պետական բյուջեից եւ նույնքան էլ մասնավոր հատվածից բերել, դա բավական լուրջ գումար կլիներ գիտություն զարգացնելու համար: Գրեթե տասնապատիկ ավելի, քան այսօր բյուջեից տրամադրվում է: Լուրջ ակնկալիքների համար բյուջեն առնվազն 10 անգամ պետք է մեծացվի: Այս դեպքում եւ նկատի ունենալ պետական եւ մասնավոր հատվածները միասին:

- Ձեր ելույթներից մեկում հիշատակեցիք ԱՄՆ-ի մեր հայրենակից գիտնականի լաբորատորայի մասին, որն ունենալով 13-14 աշխատակից՝ տնօրինում էր մոտ 13 մլն դոլլարի բյուջե: Պատերազմից հետո Ամերիկյան մեկ ուսանողի հաշվով 40 հազար դոլլար գումար էր տրամադրում, որը ֆաստաստիկ մեծ թիվ էր հետպատերազմյան այդ երկրի համար: Այն ժամանակ ԱՄՆ-ում էլ կյանքը շատ լավ էր, բայց ամեն ինչով հանդերձ՝ երկրի այն ժամանակվա կառավարիչները գնացին այդ ռիսկին, ինչի արդյունքում արդեն 10-15 տարի հետո ԱՄՆ-ը առաջինն էր աշխարհում: Եվ դրա հետեւանքն է, որ այդ երկիրն իրեն այսօր նման ճոխություն է թույլ տալիս:

- Նախ՝ մենք այսօր եւ առաջիկա շատ տարիներ չենք կարող համեմատվել Միացյալ Նահանգների հետ: Վերը հիշատակված օրինակում Դուք խոսում էիք Բետեսդայում աշխատող մեր հայրենակից Ադրիան Պարսեյանի լաբորատորիայի մասին: Ասեմ, որ դա իրենց համար շատ մեծ թիվ է: Չեն կարողանում այդ գումարները ծախսել: Ունենք այլ հայրենակից՝ Արա Աբգարյանը, ով նույնպես լաբորատորիայի ղեկավար է եւ մեր գրույցներից մեկում բողոքում էր, թե բյուջեի մոտ 40%-ը ստիպված են վերադարձնել, որովհետեւ ծախսելու տեղ չունեն:

- Ո՞ր ծայրահեղություն է լավ՝ մե՞րը, թե՛ նրանցը:

- Բնականաբար՝ կարելի էր բյուջեում գիտությանը ավելի մեծ մասհանում անել: Բայց ինչ-որ բանի մասին խոսելիս պետք է նշել դրա եւ՝ օբյեկտիվ, եւ՝ սուբյեկտիվ պատճառները: Այսօրվա իրավիճակի օբյեկտիվ պատճառներից մեկն այն է, որ Հայաստանը գտնվում է բավական լարված, ծանր տարածաշրջանում, ունեցել ենք երկրաշարժ, եղել է պատերազմ: Սուբյեկտիվ պատճառն էլ այն է, որ գիտության դերակատարման վերաբերյալ մեր մոտեցումները խորհրդային ժամանակների համեմատ բացասական իմաստով փոխվել են: Օբյեկտիվ պատճառներն աստիճանաբար հաղթահարում ենք: Եթե կարողանանք ազատվել սուբյեկտիվներից էլ, կտրուկ կփոխվի գիտության նկատմամբ ցուցաբերվող մոտեցումը: Պետք է անցնենք կոնկրետ գործողությունների եւ բյուջեում արժանապատիվ մասհանում անենք գիտությանը: Պետք է խոստովանենք, որ ոլորտում լուրջ բարեփոխումների խնդիր ունենք: Հիմա մեզանում վախ կա, որ ֆինանսավորման նոր կարգեր ներդնելը կառաջացնի սոցիալական լարվածություն, դրանով կվնասենք գիտնականներին եւ

այս ոլորտում աշխատող մարդկանց: Հասկանալի է՝ պետք է զգույշ լինել, բայց եւ վաղուց ժամանակն է այստեղ որոշակի լուրջ քայլեր կատարել: Այն, ինչ արվում է, անսելի դասդաղ է: Դեռեւս երկու տարի առաջ հստակ ծրագիր էինք մշակել եւ հանրապետության նախագահի հետ քննարկել: Ըստ դրա՝ արդեն 2012-13թթ. գիտության կառավարման առումով պետք է ունենայինք ինքնակարգավորվող մի համակարգ եւ ծախսային մատով գոնե 2% բյուջե: Այդ դեպքում գիտության բյուջեն այլ, բավական լուրջ թիվ կլիներ: Եթէ կառավարությունն ընդունի առաջիկա տասը տարվա ռազմավարական ծրագիրը, դա կլինի գործողությունների ծրագիր, որը նաեւ կառավարության կողմից փաստորեն հայտարարություն է լինելու, որ մենք պատրաստ ենք առաջիկա 10 տարիներին համապատասխան քայլեր իրականացնել: Այդ գործողությունների ծրագրի հիման վրա արդեն կարող ենք լուրջ խնդիրներ դնել եւ իրականացնել:

- Հնարավոր է, որ ծրագիրն ընդունվի, հաստատվի, իսկ հետո, ելնելով իրավիճակից, համապատասխան գումարներ չհատկացվեն, եւ ամեն ինչ դառնա ի շրջանա յուր:

- Ոչ, այդ առավելագույն ծրագիրը հռչակագրային բնույթի չի լինելու, այլ առաջիկա տասը տարվա ռազմավարությունը կառավարության կողմից ընդունվելուց հետո, մենք առաջիկա 5 տարվա համար ծրագիր ենք ներկայացնելու՝ կոնկրետ ժամանակացույցով եւ ֆինանսներով, որում կներկայացվեն հնարավոր զարգացումների բոլոր տարբերակները: Կառավարության ընդունումից հետո դա դառնում է գործողությունների ծրագիր:

- Դա, իհարկե, լավ է: Բայց արդեն 10-15 տարի մեր տնտեսության առաջնայնությունների վերաբերյալ ասում են, որ այն պետք է լինի գիտելիքահենք: Արդյո՞ք գիտելիքահենք տնտեսության հիմքերը դրված են: Մեր տնտեսությունն այսօր էլ շարունակում է մնալ առեւտրային: Վերջերս պետական համալսարանի ղեկավարներից մեկը պատմեց, որ իրենց գիտնականը տեւական ժամանակ իր գյուղը չէր վաճառում, մերժում էր դրսից արվող ֆինանսական բավական գրավիչ առաջարկները: Ի վերջո՞ համոզվելով, որ այստեղ ոչ ոք դրանով չի հետաքրքրվում, ստիպված էր տեղի տալ:

- Ճիշտ չի լինի ասել, թե ոչինչ չի արվել: Եթէ համեմատենք 2006թ. եւ 2009թ. գիտության բյուջեները, կտեսնենք, որ 2009թ. բյուջեում սկզբունքա-

յին փոփոխություններ են կատարվել, որ նախկինում չկային: Այն ժամանակ ինստիտուտում աշխատող մարդկանց թվով բյուջե էին որոշում՝ բնավ չհետաքրքրվելով տվյալ ինստիտուտի տված գիտական արդյունքով: Հիմա գիտության բյուջեն կառուցվածքով էապես փոփոխվել է: Օրինակ՝ միջազգային համագործակցությանը լուրջ ուշադրություն է դարձվում. դրա համար տարեկան շուրջ 150 մլն դրամ է հատկացվում, որ առաջ չկար: Եթէ նախկինում համաֆինանսավորման գաղափարը միանշանակ անընդունելի էր, հիմա այն մեզանում հիմնովին արմատավորվել է: Մենք սկսել ենք հասկանալ, որ արտասահմանը մեզ որպես գործընկեր կընդունի, եթէ մենք մշտապես մեր բաժին գումարը ներդնելով ընդհանուր գործի, ծրագրի մեջ՝ նրանց հետ խոսենք որպես հավասարը հավասարի եւ ոչ թէ մշտապես աղքատ բարեկամի նման խնդրողի դիրքերից: Արդեն Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի հետ հենց այդ սկզբունքով աշխատել ենք, շուտով այսպէր կաշխատենք նաեւ Ռուսաստանի եւ Բելառուսի հետ:

Այս մոտեցումն էլ է արմատավորվում մեզանում: Հայաստանում գիտական կենտրոնների ֆինանսավորում էրբեք չի իրականացվել: Իսկ գիտական կենտրոնի առկայությունը մեզ հնարավորություն է տալիս գիտություն-կրթություն կապն ավելի ուժեղացնել, գիտակրթական, գիտարտարական կենտրոններ ստեղծել: Դրա համար բյուջեում տարեկան մոտ 160 մլն դրամ գումար է նախատեսված:

Մի բան, որը նույնպես ժամանակին չի եղել: Նախկինում ինստիտուտների բյուջեի 87%-ը աշխատավարձի ֆոնդ էր, 13%-ը՝ տնտեսական ծախսեր, որով գործնականում ոչինչ անել հնարավոր չէր: Հիմա սրանց տնտեսական ծախսերն ավելացրել ենք 2-2.5 անգամ՝ որոշ հիմնարկներում հասցնելով 25-30%-ի: 2006թ. հիմնարկների հիմնական մասը ձմռան ամիսներին չէր աշխատում: Հիմա գրեթե բոլորը ջեռուցվում են: Անչափ կարեւոր են համարում պետական նպատակային մի շարք ծրագրերի ֆինանսավորումը, որոնք առաջիկա 2-3 տարիների ընթացքում կփոխեն գիտահետազոտական աշխատանքների որակը: Օրինակ՝ ազգային ԳՐԻԴ նախաձեռնությունն արդեն իսկ տվել է լուրջ արդյունքներ: Այսօր մեր երկրում սեյսմիկ ծառայության, օդերևութաբանական ծառայության եւ շրջակա միջավայրի մոնիտորինգի ծառայություն-

ներն ընգրկված են այդ ցանցում: Այն միավորում է մեր հանրապետությունում գործող 6 խոշոր կլաստերները եւ միջազգային ասպարեզում ստացել է լուրջ ճանաչում: Առաջիկա տարիներին այն կմիանա սեւծովյան համագործակցության ցանցային ծրագրին եւ Ռուսաստանի Դաշնության Դուբնայի ԳՐԻԴ ցանցին: Ի դեպ՝ նշեմ, որ նախկին ԽՍՀՄ տարածքում այս ծրագիրը բովանդակային իմաստով եզակիներից է եւ ունի զարգացման լուրջ հեռանկարներ:

Այսօր գիտության բյուջեում միջազգային գիտաժողովների ֆինանսավորմանը վերաբերող առանձին տող կա: Մեկ տարում մենք շուրջ 40 միջազգային գիտաժողով ենք ֆինանսավորել: Գիտնականների այցերի համար գործուղումների ֆինանսավորման առանձին տող ենք ավելացրել: Վերջին երկու տարիներին բարձր վարկանիշ ունեցող ավելի քան 40 գիտնականներ օգտվել են այդ գումարներից:

Մի խոսքով՝ գիտության բյուջեում լուրջ, գաղափարական փոփոխություններ են եղել, ինչը սկզբունքային նշանակություն է ունենալու: Իհարկե՝ այդ ամենը շատ քիչ է: Կարելի էր շատ ավելին անել: Բայց շատ հաճախ պահպանողականությունը մեզ խանգարում է: Այսօր ՀՀ ԳԱԱ հիմնարկներում գործում են խաղի տարբեր կանոններ, օրինակ՝ բյուջեի բաշխման հարցում, մյուս հիմնարկներում՝ բոլորովին այլ: Այդ ամենը պետք է հաշվի առնենք: Ակադեմիան այսօր պահանջում է, որ իրենց համակարգի գիտական ծրագրերի եւ հաշվետվությունների փորձաքննությունն իրենք իրականացնեն: Այլ հիմնարկներում գործում են այլ մոտեցումներ: Այսինքն՝ ՀՀ ԳԱԱ-ն ցանկանում է, որ լիազոր մարմնի որոշ իրավունքներ վերապահվեն իրեն, մասնավորապես՝ պետական պատվերը ձեւավորեն իրենք, որն, ըստ իս, այնքան էլ ճիշտ մոտեցում չէ: Պետական պատվերը ձեւավորում է կառավարությունը՝ հանձնի տվյալ ոլորտի լիազոր մարմնի: Ակադեմիական համակարգը կարելու համակարգ է, բայց այն նույնպես բարեփոխումների կարիք ունի: Այս ամենով հանդերձ՝ Գիտության պետական կոմիտեն, որին տրված է բարեփոխումներ իրականացնելու առաքելությունը, իրականում ունի խիստ սահմանափակ լիազորություններ եւ ազատության բավական փոքր աստիճան: Իրականում հաջողությամբ լուրջ բարեփոխումներ



իրականացնելու համար կոմիտեն պետք է լինի կա՛մ առանձին նախարարություն, կա՛մ կառավարությանն առընթեր կոմիտե՛ գիտական, գիտատեխնիկական գործունեության, առաջատար տեխնոլոգիաների, գիտական բիբլիոգրաֆիկ ծառայությունների, նորարարական գործունեության, գիտական կարգերի պատրաստման խնդիրներին առնչվող հստակ սահմանված լիազորություններով: Առկա պայմաններում էլ մենք այս երկու տարիներին բավական մեծ դժվարությամբ որոշակի բարեփոխումներ, այնուամենայնիվ, իրականացրել ենք:

Բացի այդ, այսօր անհասկանալի են ճյուղային ինստիտուտների կարգավիճակը եւ լիազորությունները: Բոլոր ճյուղային ինստիտուտները ենթարկվում են այս կամ այն նախարարության: Օրինակ՝ Գյուղնախարարության հիմնարկների տնօրեններին նշանակում եւ ազատում է գյուղնախարարը: Եղել են նման գրեթե բոլոր հիմնարկներում եւ հասկացել, որ նախարարությունները այդ հիմնարկների նկատմամբ որեւէ պարտականություն չունեն: Ոչ մի նախարարություն ոչ մի դրամ չի հատկացնում իր ենթակայության ինստիտուտներին: Պետական ծրագրերը, որոնք իրականացվում են այդ ինստիտուտներում, որեւէ կապ չունեն այդ նախարարությունների սահմանած գերակայությունների հետ: Գրեթե բոլոր ճյուղային ինստիտուտները ինքնահոս վիճակում են: Եթե կա ճյուղային ինստիտուտ, ապա պետական պատվեր իջեցնողը պետք է լինի տվյալ նախարարությունը, որը պետք է այդ ինստիտուտի նկատմամբ ունենա նաեւ ֆինանսական որոշակի պարտավորվածություններ: Այդ հիմնարկները վերակենդանացնելու համար որպես միջանկյալ տարբերակ կարելի էր սկզբնական փուլում վերջիններս դարձնել Գիտության պետական կոմիտեին առընթեր: Դրանից հետո, երբ կհաստատվեին համապատասխան խաղի կանոններ, հիմնարկները կկատարեին տնտեսության այս կամ այն ոլորտի համար անհրաժեշտ հետազոտական ծրագրերը, սերտ կհամագործակցեին մասնավոր հատվածի հետ, միջազգային կապերը կսկսեին հստակ աշխատել, թերեւս իմաստ կունենար այդ ինստիտուտները վերաբաշխել տարբեր նախարարությունների միջեւ՝ վերջիններսիս տալով համապատասխան իրավունքներ եւ պարտականություններ:

Հիմա ունենք ճյուղային 25 ինստիտուտ, որոնք ֆինանսավորվում են միայն Գիտության պետական կոմիտեից, եւ որոնց վրա ոչ մի նախարարություն ոչ մի դրամ չի ծախսում: Այդքանով հանդերձ՝ Գիտության կոմիտեն այդ ինստիտուտների նկատմամբ որեւէ իրավունք եւ վերահսկողական ֆունկցիա չունի: Անցած տարի մի քանի ինստիտուտի (որոնց տնտեսական ծախսերը եռակի մեծացրել էինք) տնօրեններից փորձել են ճշտել, թե ինչպես են տնօրինել այդ գումարները: Բոլորն էլ չհիմնավորված պատասխաններ են տվել: Հիմնականում պատասխանում են, թե նախորդ տարիների պարտքերն են փակել: Նրանք դրա իրավունքը չունեն, եւ իրականում ստացվում է, որ այսկերպ գումարները փոշիացվում են: Իսկ այդ ամենը ճյուղային ինստիտուտների առումով անհասկանալի իրավիճակի հետեւանք է:

- Այն, ինչ Դուք ներկայացնում եք, մեծ հաշվով հայտնի է հանրությանը: Նորություն չէ, որ Նշյալ բոլոր գիտակրթական ոլորտներում գիտությունը միանշանակ առաջին պլանում չէ: Առաջնահերթ բոլորովին այլ խնդիրներ են դրված: Հասկանալի է՝ Դուք եւ՛ որպես ոլորտի ղեկավար, եւ՛ որպես գիտնական, շատ ավելի մեծ տեղեկատվության կրող եք ու հիմնախնդրի խորությունը ավելի լավ եք պատկերացնում: Բայց այն, ինչ տեսանելի է գիտության, բարձրագույն կրթության, նույն Ակադեմիայի անցուղարձից, հուսահատեցնող է: Եթե նույնիսկ հրաշքով գիտության ոլորտում ամեն ինչ կարգի ընկնի, մենք կրթության համակարգում խնդիրներ ունենք: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ-երրորդ մաթեմատիկայի մասնագետը խոստովանում է, որ նոր գրքերը մի կողմ թողած՝ գաղտնի, կիսածածուկ պարապում են հին գրքերով, հին ծրագրերով: Մանկավարժներն արդեն հրապարակավ հայտարարում են, որ ոլորտում անհասկանալի բարեփոխումներ են: Նման շարունակության դեպքում արդեն որոշ ժամանակից կրթության համակարգն ի վիճակի չի լինելու սպասարկել գիտությանը:

- Կրթությունը եւ գիտությունը փոխկապակցված, անբաժանելի կատեգորիաներ են: Բոլոր բարեփոխումներն այստեղ անհրաժեշտ է իրականացնել փոխհամաձայնեցված տարբերակով: Անելիքը իրոք բավական շատ է: Եվ ցավով պետք է խոստովանեմ, որ դեռեւս ոչ բոլոր խնդիրներն են

հստակ ձեւակերպվում ու լուծվում: Բայց եկեք լինենք լավատես եւ հուսանք, որ մեր ժողովուրդն ունի բավարար կամք ու կարողություններ՝ բոլոր խնդիրները մոտ ապագայում լուծելու:

- Որոշակի ի՞նչ քայլեր, միջոցառումներ պետք է իրականացվեն առաջիկա մեկ-երկու տարիներին՝ իրավիճակը շտկելու, գիտությունը, հետեւաբար եւ տնտեսությունը զարգացնելու ուղղված:

- Նախ՝ գիտության բյուջեն պետք է առնվազն կրկնապատկվի: 8.3 մլրդ-ը շատ փոքր թիվ է: Միաժամանակ՝ օպտիմալացման խնդիրներ պետք է լուծվեն: Գիտության մասին հիմնական օրենքը պետք է փոխվի (շուտով փոփոխված տարբերակը կներակայացնենք կառավարության դատին): Անպայման պետք է ներդրվեն ֆինանսավորման նոր կարգերը, որոնք հասկանալի եւ ընդունելի կլինեն քաղաքակիրթ աշխարհին: Պետք է հստակեցվեն գիտության գերակայությունները, որովհետեւ 2003թ. ընդունված գերակայությունները գիտականորեն հիմնավորված չեն: Այսօր աշխարհում ճանաչված ժամանակակից մեթոդներով հստակեցրել ենք մեր գերակա խնդիրները: Պետք է մշակվեն մեր ռազմավարական ծրագրերը: Ռազմավարությունը ընդունելուց հետո պետք է ներկայացնենք առաջիկա հինգ տարվա ռազմավարական ծրագիրը՝ ֆինանսական բոլոր հաշվարկներով: Ամեն ինչ պետք է արվի՝ ելնելով այն հանգամանքից, որ գիտությունն ու կրթությունը խիստ փոխկապակցված են: Մինչեւ 2015-16թթ. երկու-երեք լուրջ հետազոտական համալսարան է պետք ունենալ, որպեսզի կարողանանք ապահովել գիտություն-կրթություն ինտեգրացիան: Այսօր աշխարհում գոյություն ունեցող ամենալավ տարբերակը հետազոտական համալսարանների ստեղծումն է: Շատ երկրներ այդ ճանապարհով անցել են: Եւ այս եղանակն արդարացված է: Դրա փոխարեն ունենք 17 պետական բուհեր, որոնց մի մասի գոյության իմաստն անհասկանալի է:

Նշյալներն անպայման պետք է իրականացվեն: Ես լավատես եմ, որովհետեւ ժամանակին հանրապետության նախագահի հետ այս հարցերը բազմիցս քննարկել ենք, ու նրա կողմից առկա խնդիրները լուծելու աջակցություն կա: Եթե կարողանանք աջակցություն ստանալ նաեւ պետական բյուջեի միջոցով, անպայման որոշակի հաջողությունների կհասնենք: ■